Հայ ժողովուրդը ցույց տուեց այնպիսի կենսունակութիւն և ինտենսիւ աշխատանք, որ եզակի է ոչ միայն մեր ժողովրդի պատմութեան մէջ, այլև այդպիսին պիտի համարել նաև ազգերի կեանքում: Մեր ժողովուրդը այդ ժամանակամիջոցում կարողացաւ կատարել այնպիսի մի գործ, որն ուրիշ ժամանակներ տարիների ընթացքում կատարել չէր կարող: Նա, դեռ նոր ազատուած սովից ու հիւանդութիւններից՝ լծուեց քաղաքական աշխատանքի:

Այդ ամիսների ընթացքում կառավարութիւնը ժողովրդին տուեց 350 հազար փութ սերմացու. բացի այդ քանակից ինքը ժողովուրդը մի միլիոն փթից աւել այդ 350,000 փթի վրա աւելացնելով՝ ցանեց և այժմ հնձում է: Նա ձգտում է տնտեսապէս և ֆիզիքապէս անկախ դառնալ և անկախ ապրել:

Մեր ժողովրդի ծոցից դուրս եկած խորհրդարանի անդամները, դուրս գալով քաղաքից, ցրուեցին և անցան գաւառները՝ Շամշադին, Ղազախ, Զանգեզուր, Ղարաբաղ, Դարալագեազ, Նոր-Բայազէտ, Էջմիածին, Շիրակ և այլ շրջաններ:

Այդ բախտորոշ օրերին մեծ և վճռական դեր կատարեցին Հայաստանի անկախութեան պլատֆորմի վրա կանգնած քաղաքական կուսակցութիւնները, մանաւանդ Հ. Յ. Դաշնակցութիւնը, որն իր բոլոր ուժերը մոբիլիզացիայի ենթարկելով՝ տրամադրեց Հայաստանի կառավարութեան: Մեր իրականութեան չորս կուսակցութիւնները՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը, Հ. Ս. Դ. Բանուորական, Ժողովրդական և Ռամկավար կուսակցութիւնները մեծ գործ են կատարել մեր պետականութեան աստիճանը բարձրացնելու գործում:

Բայց առաւել ևս մեր ժողովուրդը ցոյց տուեց ոգմոդի: Մեր բանակը, որ նոր էր հանդստացել և դեռ նոր էր լրացրել ինքնապաշտպանութեան գործը, նա, այդ քաջարի զօրքը, զբաղուեց մեր սահմանների բոլորման խնդրով և այդ արաւ մեծ յաջողութեամբ, որ մինչև այժմ եղածների մէջ եզակի պիտի համարել: Վերջերս նա տարաւ մի շարք յաջողութիւններ ապստամբ շրջանների վրա: Կռուի ընթացքում միջոց տրուեց բոլոր նրանց, որոնք կը ցանկանան ընդունել մեր քաղաքացիութիւնը, դան և հպատակութիւն յայտնեն, որով և կեանքի ապահովութիւն տրուեց: Ապացոյց դրան Ուլուխանլու թուրք գիւղը, որին մենք հովանաւորեցինք և որն այժմ բարգաւաճ վիճակի մէջ է:

Մնացեալ գիւղերը՝ Զանգիբասարի և Վէդի-Բասարի շրջաններում, որոնք չցանկացան մնալ և լինել Հայաստանի քաղաքացիներ, ընկան մեր զօրքերի շեշտակի հարուածների տակ: «Գայլի Դրունքը» և Բէյոյիւք-Վէդին, ուր անցեալ տարի մենք կորուստներ ունեցանք, ընկան մէկը միւսի ետևից (բառն ծափեր և ցոյցեր): Մեր զօրքը տարաւ նաև ուրիշ երկու մեծ յաղթութիւն՝ Ղազախում և Օլթիի ճակատում:

Ղազախում թշնամին մեր սահմաններից ներս էր խուժել, որի հետևանքով առաջացան հակապետական խլրտումներ, որոնք բոլորն էլ անյաջողութեան մատնուեցին՝ ստանալով արժանի հակահարուածներ խորհրդարանի անդամ և ժողովրդական հերոս Սեպուհի բանակի կողմից: Այս, ի հարկէ, փայլուն ապացոյց է այն բանի, որ ժողովուրդն ինքն է իրեն պաշտպանում՝ ունենալով ամենաչնչին մասնակցութիւն (ծափեր):

Մինչև Գայլի Դրունքի հասնելը մեր զօրքերը անարգել շարժուում էին: Այստեղ մեր հրամանատարութեան ներկայացան ապստամբների պատուիրակները և խնդրեցին հնարաւորութիւն տալ՝ Հայաստանի կառավարութեան հետ բանակցելու: Այդ հնարաւորութիւնը նրանց տրուեց և նրանք ամենաշտապ կերպով բերուեցին մայրաքաղաք, ուր և բանակցութիւնները տեղի ունեցան: Այն պայմանները, որ մեր կառավարութիւնն առաջարկեց, շատ